ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ
ԿԱՐԾԻՔ
ՄԱՐԻԱՄ ԱՐԹՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ
«ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»

Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության մասին

Մարիամ Հակոբյանի **«ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»** թեկնածուական ատենախոսության վերաբերյալ.

Մարիամ Հակոբյան ատենախոսությունը գիտականորեն պատշաճ ձևակերպված համալիր ուսումնասիրություն է, որն առանձնահատուկ փորձ է նոր դիտանկյունից քննության առնելու Ջեք Լոնդոնի ստեղծագործական աշխարհը: Այն փաստը, որ գրաքննադատների մեծ մասը դասում են այս ամերիկացի հեղինակին ռեալիստների շարքին, որոշ դեպքերում նաև կապ են նկատում նատուրալիզմի հետ, հետաքրքրական է դարձնում այս աշխատությունը:

Մարիամ Հակոբյանի ատենախոսության թեման **արդիական է,** քանի որ Լոնդոնի ստեղծագործությունների կիզակետում մարդկային ճակատագիրն է և գլոբալիզացված քաղաքակիրթ աշխարհի խնդիրները:

Ատենախոսության **գիտական նորույթը** պայմանավորված է ամերիկյան նեոռոմանտիզմի, ինչպես նաև Լոնդոնի երկերում նեոռոմանտիկ գրականության գեղագիտության ձևավորման նորովի մեկնաբանմամբ և Լոնդոնի զգալի թվով ստեղծագործությունների լուսաբանության առաջին փորձով նեոռոմանտիզմի համատեքստում:

Ատենախոսության **նպատակն է** բացահայտել նեոռոմանտիզմի հիմնական առանձնահատկությունները, ուսումնասիրել ամերիկյան նեոռոմանտիզմի առանձնահատկությունները, ինչպես նաև առանձնացնել Լոնդոնի արձակում ամերիկյան նեոռոմանտիզմին առնչվող գեղագիտական ու գաղափարական բաղադրիչները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «**Ամերիկյան նեոռոմանտիզմի առաջացման նախադրյալները**», նվիրված է նեոռոմանտիզմի առաջացման, պատմության վերլուծությանը, ինչպես նաև անդրադարձ է արվում տարբեր գրականություններում նեոռոմանտիզմի դրսևորումներին:

Ատենախոսության երկրորդ՝ **«Մարդ-բնություն-քաղաքակրթություն շղթան Ջ. Լոնդոնի նեոռոմանտիկական ստեղծագործություններում»** գլուխը նվիրված է մարդ - կենդանի փոխհարաբերություններին, բնություն - քաղաքակրթություն առնչությանը նեոռոմանտիզմի գեղագիտության շրջանակներում:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Բացառիկ հերոսի նեոռոմանտիկական մեկնաբանությունը Ջեք Լոնդոնի վեպերում», նվիրված է բացառիկ նեոռոմանտիկ հերոսի վերլուծությանը Ջ. Լոնդոնի **«Լուսնի հովիտ», «Երկաթե կրունկ», «Ծովագայլը» վեպերում**, քննվում է **«Զսպաշապիկը» վեպում** նկարագրվող ճամփորդությունը՝ որպես հոգևոր մաքառման, իրականությունից փախուստի, ազատության հասնելու միջոց,իսկ **«Մարտին Իդեն» և «Մեծ տան փոքրիկ տիրուհին» վեպերում** ներկայացվում է մահվան փիլիսոփայությունը որպես ազատագրման միջոց, ինչպես նաև խորն անդրադարձ է արված Լոնդոնի վեպերում կին կերպարներին

Ատենախոսության **Եզրակացություն** բաժնում ներկայացված են այն հիմնական դրույթները, որոնց ատենախոսը հանգել է ուսումնասիրության արդյունքում և որոնք պատասխանն են ատենախոսության սկզբում առաջադրված հարցադրումներին:

Սեղմագրում ներկայացված դրույթները և տպագիր աշխատանքները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Ցանկանում ենք նշել, որ ատենախոսության գիտական նորույթի հիմնավորումը փորձարարական է, սակայն առավել համոզիչ դարձնելու համար սույն ատենախոսության հիմնական թեզիսը՝ այն է. Ջեք Լոնդոնը նեոռոմանտիզմի ներկայացուցիչ է, մեր կարծիքով, պահանջում է առավել խորքային մոտեցում: Ողջունելի է այն, որ Մարիամ Հակոբյանին հաջողվել է Ջեք Լոնդոնի ստեղծագործությունների դիպուկ ընտրություն (‹‹Լուսնի հովիտ››, ‹‹Բոցավառ արշալույս››, ‹‹Մեծ տան փոքրիկ տիրուհին››, ‹‹Ծովագայլը››,‹‹Մարտին Իդեն››), որոնց պատումի և կերպարների միջոցով բացահայտվում է նեոռոմանտիկական տեխնիկայի առկայությունը Ջեք Լոնդոնի գրվածքներում: Ատենախոսության մեջ մաքսիմալ կերպով անդրադարձ է արվում այն ուսումնասիրողների աշխատություններին (Ի.Կլիմենկո, Ն. Պախսարյան), ովքեր ապացուցելի կերպով քննության է առել Ջեք Լոնդոնի նեոռոմանտիկ միտվածությունը:

Ատենախոսության մեջ նաև ներառված են թարգմանություններ, որոնք կատարվել են Մարիամ Հակոբյանի կողմից: Ցանկալի է այս գեղարվեստական թարգմանությունները փոխանցեն նեոռոմանտիզմի գեղագիտական դրույթները, քանի որ մինչ այժմ արված թարգամնչական նյութը արտացոլել է Լոնդոնի ռեալիստական գրելաոճը:

Ատենախոսության հեղինակը փորձ է կատարել նաև կապել Ջեք Լոնդոնի ստեղծագործությունների նեոռոմանտիկ բնույթը անիմալիզմի հետ, ավելի ստույգ,

անիմալիստական սիմվոլիկայի հետ, սակայն, մեր կարծիքով, այս մոտեցումը **կարելի** էր առավել փաստարկված կերպով անել: Մարիամ Հակոբյանի ատենախոսության գրականագիտական ուղղվածությունը անհերքելի է, սակայն հաշվի առնելով այն թաստը, որ նեոռոմանտիզմը անմիջական փոխկապակցվածություն ունի հոգեբանության հետ, կարելի էր առավել մանրակրկիտ դիտարկել այս կապը: Սույն ատենախոսությունը, այնուամենայնիվ, փորձ է նորովի ներկայացնել մի գրողի, որի վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ, սակայն այս ատենախոսության հեղինակը այլ հարթության մեջ է դնում և՛ Լոնդոնին, և՛ նրա ստեղծագործությունները:

Այդուհանդերձ, հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ դիտարկումները.

1. Հաշվի առնելով այն փաստը, որ ամերիկյան նեոռոմանտիզմը համարվում է մի գրական ուղղություն, որը բնութագրվում է վերադարձով դեպի ռոմանտիկական իդեալներ, հատկապես, շեշտադրելով էմոցիաները, երևակայությունը և բնության գեղեցկությունը, ինչը և յուրահատուկ պատասխան էր մոդեռնիստական աշխարհի սառնությանը, ցանկալի կլիներ, որ Մարիամ Հակոբյանը դիտարկեր և քննության առներ Ջեք Լոնդոնի ստեղծագործություններում ինտրոսպեկցիայի և հոգեբանական միտվածության խնդիրը, որոնք ներմուծված են Ջեք Լոնդոնի վեպերում սիմվոլիկ էլեմենտների միջոցով:

2. Ներածության մեջ՝ էջ 3-ի վրա, հանդիպում ենք հետևյալ նախադասությանը. ‹‹Ամերիկյան նեոռոմանտիզմի ամենահայտնի ներկայացուցիչը Ջեք Լոնդոնն է››: Սակայն, մեր կարծիքով, այսպիսի պնդումը փոքր-ինչ ճշգրիտ չէ, քանի որ, նախ, Լոնդոնին գրականագետները դասում են հաճախ ‹‹ռեալիստների›› շարքին, նաև այն պատճառով, որ ամերիկյան նեոռոմանտիզմի ցայտուն ներկայացուցիչներ են Ջոն Էշբերին, Բիրսը, Քեյ Բոյլը (արձակ) և Չարլզ Բերնստայնը (պոեզիա):

3. Ցանկալի կլիներ Մարիամ Հակոբյանի ուսումնասիրության մեջ տեսնել զուգահեռներ Ժան-Ժակ Ռուսոյի ‹‹բնական մարդու›› փիլիսոփայության հետ, քանի որ նրա կողմից քաղաքակրթության քննադատությունը անմիջական կերպով անդրադարձվեց նեոռոմանտիզմի ստեղծագործությունների վրա:

4. Չնայած Մարիամ Հակոբյանի աշխատության մեջ դիտարկվել է Զիգմունդ Ֆրոյդի ‹‹հոգեվերլուծության›› տեսության կապը Լոնդոնի կերպարների հետ, սակայն, մեր կարծիքով, աշխատանքը կշահեր, եթե ներկայացված հարցադրումները քննության առնվեին Կ.Գ. Յունգի արքետիպերի տեսության ներքո, քանի որ նեոռոմանտիզմը, առհասարակ, և մասնավորապես, ամերիկյանը, սերտ փոխկապակցված են այս տեսության հետ:

Նշված նկատառումները չեն նսեմացնում ատենախոսի կատարած ուսումնասիրության գիտական արժեքը, ավելին, դրանք մատնանշում են թեմայի ավելի խորը քննության հնարավորություն:

Այսպիսով, **ՄԱՐԻԱՄ ԱՐԹՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ *«ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»*** թեմայով ատենախոսությունը բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջներին:

Վերը նշվածը հնարավորություն է տալիս միջնորդել Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի՝ 066 «Արտասահմանյան գրականություն» մասնագիտական խորհրդին՝ **ՄԱՐԻԱՄ ԱՐԹՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ *«ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆԵՈՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՋԵՔ ԼՈՆԴՈՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»*** Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն» թեմայով ատենախոսության համար շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Անահիտ Եգանյան
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Եգանյանի ստորագրությունը հաստատում եմ
ԵՊՀ գիտական քարտուղար
24.06.2025